

Արմինե Հովհաննեսի Խոկաջյանի՝ «Դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ» ԺԹ.00.03. «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

## Կ Ա Ր Ծ Ի Ք

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումների ժամանակակից դարաշրջանում մարդու կյանքի անբաժանելի մասն է կազմում համացանցը, դրանում գոյություն ունեցող բազմաբույսական տեղեկատվական հարթակները։ Տեղեկատվության նկատմամբ ցուցաբերվող ակտիվ հետաքրքրությունները բնորոշ են բոլոր սերունդներին, սակայն դրանում առավել աչքի են ընկնում երեխաները, դեռահասներն ու պատանիները, երիտասարդները։ Դա բացատրվում է իմացության նկատմամբ սերունդների հետաքրքրություններով, հասարակության գիտատեխնիկական առաջընթացով, հոգևոր արժեքների նկատմամբ նրանց ունեցած պահանջմունքով։

Սակայն ամբողջ աշխարհում, այդ թվում նաև ՀՀ-ում դիտարկվող տեղեկատվական դաշտի ընդարձակման արագ տեմպերը նպաստում են նաև տեղեկատվությունից օգտվելու և դրանց չափավորման մշակույթի ստեղծմանը։ Հոգեբանական առումով, գործընթացը իր մեջ ներառում է նաև բազմաթիվ վտանգներ, առավել ևս, եթե խախտվում են անձի կողմից նրա հետ վարվելու պահանջները, չափավորման կանոնները (համակարգվածություն, տեղեկատվության նկատմամբ չվերահսկվող ազարտ, մտավոր գերիզնածություն, նյարդային շարունակական լարվածություն, բնավորության շեշտվածություն, ներոտիկ ռեակցիաների ամրակայում և այլն)։

Մյուս կողմից՝ տեղեկատվական միջոցները ունեն ռազմավարական կարևոր նշանակություն։ Տեղեկատվական միջոցները պետությունների կողմից հմտորեն կիրառվում են հիբրիդային պատերազմներում, որում թիրախավորվում են հատկապես դեռահասներն ու պատանիները, երիտասարդները։ Ստեղծվում են

հատուկ նշանակության կազմակերպություններ, պրոպագանդիստական կենտրոններ, որոնք ապակողմնորոշում կառավարում են լայն զանգվածներին, անհրաժեշտության դեպքում մոբիլիզացնում իրենց նպատակների շուրջ:

Մյուս կողմից համացանցային ակտիվ գործունեությունը դեռահասի համար իրական կյանքից, դժվարություններից ու խնդիրներից հեռանալու, հոգեբանական փախուստի դրսևորում է: Բացի այդ, համացանցային կախվածության հիմնախնդիրը համեմատաբար նոր սոցիալ-հոգեբանական երևոյթ է և ամբողջությամբ ուսումնասիրված չէ:

Անդրադառնալով ատենախոսական աշխատանքի գնահատման պահանջներին, հարկ է նշել, որ Արմինե Հովհաննեսի Իսկաջյանի հետազոտությունը բաղկացած է ներածությունից, ինչպես նաև առաջադրված տեսական և հետազոտական խնդիրների լուծման երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված 140 անուն մասնագիտական գրականության ցանկից: Աշխատանքի տեսական և հետազոտական խնդիրների վերլուծությունները իրականացվում են հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար գաղափարների քննարկման շրջանակներում: Հստակ ձևակերպված են աշխատանքի նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, հետազոտության վարկածն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Գրագետ կերպով հիմնավորվում են հետազոտության համակազմի տարիքային, սեռային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետազոտության մեթոդների ընտրության նպատակահարմարությունը, դրանց ներկայացվող գիտական պահանջների բազմազանությունները:

Ատենախոսական աշխատանքի առաջին «Համացանցային կախվածության հիմնախնդիրը հոգեբանական գիտության համատեքստում» վերնագրով տեսական գլխում Ա. Իսկաջյանի կողմից ներկայացվում են դեռահասների համացանցից կախվածության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, դրանց հետ կապվելու մեխանիզմներն ու դրանց սիմպտոմատիկ բնութագրերը: Հեղինակի

կողմից արվող վերլուծություններն ու հետևությունները, եզրակացություններն ու համարժեք դատողությունները ամրակայվում են հիմնախնդրի ուսումնասիրման բնագավառում հայրենական և արտասահմանյան գիտնականների գաղափարներով։ Այնուհետև մանրակրկիտ կերպով ներկայացվում են համացանցային կախվածության պատճառականությունները, տարիքային, անհատական առանձնահատկությունների անձնային, սեռային յուրահատկությունների սոցիալ-հոգեբանական վերլուծությունները։ Համեմատական վերլուծությունների ձևով ներկայացվում են տարբեր գիտնականների կողմից հիմնախնդրի ուսումնասիրման բազմակողմանի մոտեցումների յուրահատկությունները,

Այնուհետև հեղինակը անդրադառնում է հոգեբանական գիտության ոլորտում համացանցային կախվածության հիմնախնդրի ուսումնասիրվածությանը։ Հեղինակը մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանում անձի կախվածության, կամ աղիկտիվ վարքի վերաբերյալ ուսումնասիրությունների հոգեբանական առանձինահատկությունները, աղիկտիվ վարքի ձևավորման դետերմինանտները, այդ թվում նաև հեղինակների կողմից հիմնախնդրի լուծման ինքնատիպ մոտեցումները։

Ա. Իսկաջյանի վերլուծությունները ուղղված են նաև սոցիալական ցանցերից կախվածության հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին։ Դրանցում վեր են հանվում տարբեր նշանակության սոցմեդիաների տեսանելի ու քողարկված կողմերը (տրամադրության տատանումներ, դեպրեսիա, քնի խանգարումներ, տագնապ, դյուրագոզովածություն, համացանցային խաբեություն, կիբերբուլինգ, թրոլինգ և այլն), դրանց գործառնական ուղղությունների դրական և բացասական կողմերը, առավելություններն ու թերությունները, ազդեցության հոգեբանական մեկնաբանությունները։

Ա. Իսկաջյանի ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխում ներկայացվում են դեռահասների հոգեբանական բնութագիրը, նրանց հոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում նաև նրանց բնորոշ ճգնաժամերն ու դրանց

վերաբերյալ հայտնի տեսությունների հիման վրա հիմնահարցի մանրամասն վերլուծությունները: Վերլուծություններում առանձնակի տեղ է հատկացվում նաև դեռահասների դեստրուկտիվ վարքի ձևավորման և դրսորման հոգեբանական առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց բնութագրերին: Հեղինակը անդրադառնում է նաև սոցիալական ցանցերի բացասական մարտահրավերներին, դեստրուկտիվ խաղերի տեսակներին ու դրանց ազդեցության հոգեբանական առանձնահատկությունների մեկնաբանումներին: Հետաքրքիր վերլուծություններ են արվում դեռահասների դեստրուկտիվ վարքի վիճակագրական արդյունքների մեկնաբանման ուղղությամբ: Դրանցում վեր են հանվում վերջին տարիներին ՀՀ-ունում գրանցված ինքնասպանության և ինքնասպանության փորձերի ժամանակագրական, սեռային, տարիքային ցուցանիշները: Ըստ հանցատեսակների և տարիների հաճախականության, ներկայացվում է քրեական պատասխանատվության ենթարկված անշափահասների թվաքանակը:

Հեղինակի տեսական վերլուծությունները ամփոփվում են համապատասխան եզրակացություններով, որոնք հարստացնում են հիմնախնդրի վերաբերյալ ընթերցողի գիտելիքներն ու նորովի պատկերացումների ձևավորումը:

Ա. Իսկացյանի ատենախոսական աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է դեռահասների՝ սոցիալական ցանցերից կախվածության հիմնախնդրի փորձարարական հետազոտություններին, համակազմի ընտրության, մեթոդների մարտկոցի ընտրության գիտական հիմնավորումներին, աշխատանքների կազմակերպման փուլերի նկարագրմանը, հետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարությանը: Այնուհետև ըստ առաջնահերթության, ներկայացվում են հետազոտության մեթոդների աւելյունքների վիճակագրական տվյալների վերլուծությունները, որոնք արտացոլված են այլուսակների, գծանկարների, սխեմատիկ նկարների տեսքով: Այնուհետև, համեմատական վերլուծությունների շնորհիվ բացահայտվել են տարբեր տարիքային և սեռային խմբերի կողմից դեռահասների անձնային ազրեսիվության, և կոնֆլիկտայնության

արդյունքների քանակական և որակական տարբերությունների գիտապրակտիկ նշանակությունը, դրանց բովանդակության առանձնահատկությունները:

Հետաքրքրական են ծնողների խմբում դեռահասների կողմից ժամանակի ծախսի և շեղվող վարքի փոփոխության գնահատականների վերլուծությունները, որոնք ընդգծում են փորձարարական և ստուգիչ խմբերում ընդգրկված դեռահաս աղջիկների և տղաների վարքագծում դիտարկվող բացասական փոփոխությունների պատճառականությունները, դրանց զարգացման նպաստավոր պայմանները:

Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքների հիման վրա հնարավորություն է ստեղծվել արդյունավետ կերպով կազմակերպել ուղեկցվող հոգեբանական խորհրդատվության և անհրաժեշտ մեթոդական ցուցումների իրականացման լուսավորչական աշխատանքներ: Ծնողների և ուսուցիչների համար կազմակերպվել են դեռահասների համացանցից կախվածության արատավոր երևոյթի կանխարգելման ուղեցույցներ, իրականացվել են բացատրական աշխատանքներ: Հետազոտական աշխատանքներն ամփոփվում են հեղինակի կողմից իրականացվող ուրեմնակացություններով, որոնք իրենց մեջ արտացոլում են աշխատանքում առաջադրված խնդիրների իրականացման իրողությունը: Սակայն աշխատանքի վերաբերյալ ունենք որոշ դիտողություններ, որոնք ներկայացվում են ստորև:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ Արմինե Հովհաննեսի Իսկաջյանի «Դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ» ԺԹ.00.03. «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող գիտական, կազմակերպչական ու հետազոտություններին ներկայացվող պահանջներին: Սակայն դրանում նկատվում են մի շարք բացթողումներ, վրիպումներ, ու թերություններ, որոնց վերաբերյալ ըստ ատենախոսական աշխատանքի կառուցվածքային բովանդակության հաջորդականության կուզեի կանգ առնել: Այսպես.

1. Հայտնի է, որ դեռահասության տարիքային փուլը ընդգրկում է 11-16-17 տարեկան հասակը: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում արվող հետևողուններն ու եզրակացությունները, որոնք վերաբերվում են ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված դեռահաս աղջիկների և տղաների վարքագծային փոփոխությունների հոգեբանական նկարագրերին, տեղի է տալիս բազում հարցադրումների:

Մասնավորապես՝ վիճակագրական ինչ հիմնավորումներ գոյություն ունեն և արդյոք 11 և 17 տարեկան երեխաների խմբերում չպետք է առանձնացնել նրանց օրգանիզմին բնորոշ տարիքային, կենսաբանական, սեռային, սոցիալ-հոգեբանական, կենսաբանական առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

2. 11-17 տարեկանները, անգամ ավելի ուշ տարիքում դեռևս շարունակվող դեռահասությանը բնորոշ դրական և բացասական տեղաշարժերը ակնառու դրսնորվում են նաև դեռահասության տարիքի միջփուլային, անցումային ժամանակաշրջաններում, որոնք վճրորոշ դեր են կատարում հետագա աղղիկտիվ, ասոցիալ, հանցավոր վարքի ձևավորման գործում (Ինգա Գրիգորյան և այլոք):
3. Ինչ սկզբունքով են ընտրված խմբերի կառուցման Զեր մոտեցումը և հետազոտական մեթոդների մեծաքանակ մարտկոցը, որում ակնառու բաց են թողնված անձի անհատական, սեռային, դրդապատճառային, արժեհամակարգային գործոնների հաշվառումը:
4. Չնայած սոցիալական ցանցերի և դրանցում գոյություն ունեցող նյութերի գայթակղիչ բովանդակությանը, այնուամենայնիվ բոլոր դեռահասները չեն, որ ներգրավվում, կլանվում են համացանցի մեջ: Այդ դեպքում ինչով է պայմանավորված ոմանց ակտիվ ներգրավվածությունը, մյուսների չափավոր օգտվելը, շատերի անտարբերությունը: Զեր կարծում, որ այստեղ անձնային հատկանիշների ուսումնասիրման առումով շատ բաց է թողնված:

5. Ինչպիսի փաստարկներ գոյություն ունեն Ձեր կողմից ստեղծված կանխարգելման և հոգեբանական ուղեկցման համակարգի կիրառական, դրա արդյունավետության նպատակահարմարության և այլ կողմերի հիմնավորման վերաբերյալ:

Ամփոփելով կարծիքի շարադրանքը, կարող ենք պնդել այն զաղափարը, որ ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտահետազոտական աշխատանք: Հեղինակը լիովին տիրապետում է հիմնախնդրի տեսական և կիրառական կողմերի պահանջներին, իրականացրել է թեմայում առաջադրված նպատակին ու ինդիրներին ներկայացվող բոլոր պահանջները: Կարծում եմ, որ նշված դիտողությունները բոլորովին չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, տեսական և եքսպերիմենտալ հետազոտությունների գիտագործնական կարևորությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Արմինե Հովհաննեսի Իսկաջյանի «Դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ» ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք, ինչը խոսում է հեղինակի գիտական հասունության և բարձր մասնագիտական պատրաստվածության մասին: Ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքային և բովանդակային կողմերին ներկայացվող պահանջներով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական աշխատանքներին և գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետին ներկայացվող բոլոր պահանջներին:
2. Արմինե Հովհաննեսի Իսկաջյանի կողմից ներկայացված «Դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ»

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության համար  
արժանի է հայցվող աստիճանին:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մ.Պ.Մկրտչյան

Հ.Գ.Դ., պրոֆեսոր Մ.Մկրտչյանի ստորագրությունը

Հաստատում են

Խ. Աբովյանի անվան ՀՊԱ գիտքարտուղար

Մ. Խ. Իսպիրյան



ՀՕ. 11. 2025.